

ԱՅՍՕՐ՝ ՍՈՒՐԻՈՅ ՀԱՐՅԻՆ ՇՈՒՐՁ
ՓՈՒԹԻՆ-ԷՐՏՈՂԱՆ-ՌՈՒՎՆԵՆ ՏԵՍԱԺՈՂՈՎ

Քրեմլինի բաւերը Տմիթրի Փեքըով յայտարարեց, որ Սուրիոյ հարցին շուրջ այսօր տեսաժողովի ձեւաչափով վեհաժողով մը պիտի գումարուի: Ան յայտնեց, թէ Ռուսիոյ Նախագահ Վլատիմիր Փութին, Իրանի Նախագահ Դասան Ռուհանի եւ Թուրքիոյ Նախագահ Ռեճեփ Թայիփ Էրտողան տեսաժողովի ընթացքին պիտի բանակցին Սուրիոյ զարգացումներուն գծով:

ԱԶԳՈՒՆ

— ԶՐԱԹԵՐԹ —

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTÉRAIRE

آزதாக جريدۀ يومية سياسية وأدبية - المودة السؤوة - إضآة زرويشتايان

1500 Լ.Ո. 94-ԲԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 90 (26362) ՉՈՐԵՔՇԱՐԹԻ, 1 ՅՈՒՆԻՍ 2020 4 ԷՁ

ԹԵՀՐԱՆԻ ԳԱՐՄԱՆԱՏԱՆ ՄԸ ՄԷՁ
ՊԱՅԾՈՒՄԻ ՊԱՏՃԱՌՈՎ՝
ՁՈՀԵՐ ԵՒ ՎԻՐԱՌՈՐՆԵՐ

Թեհրանի հիւանդատարութեան ծառայութեան ղեկավար Փէյման Սապարեան իրանեան «Ֆարս» լրատու գործակալութիւնը յայտնեց, որ Թեհրանի դարմանատան մը մէջ պայթում մը տեղի ունեցած է եւ յառաջացած է հրդեհ պատճառելով 19 զոհեր եւ 6 վիրատուրներ: Նախապէս շրջանառութեան մէջ դրուած էր տեղեկութիւն,թէ իրանեան մայրաքաղաքի Թար-ժիրշ հրապարակին մօտ շարք մը պայթումներ տեղի ունեցած են: Պայթումին պատճառը կը մնայ անյայտ:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ՔՆՆԱՐԿԵՑ
ԵԼԵՒՄՏԱԿԱՆ ԵՒ ԿՐԹԱԿԱՆ
ՀԱՐՅԵՐԸ ԵՒ ՀԱՄԱՁԱՅՆ ԳՏՆՈՒՅՑԱԻ
ԿՐԹԱԿԱՆ ՄԱՐՁԻՆ ՏՐԱՄԱԳՐԵԼ
500 ՄԻԼԻԱՌ Լ. ՈՍԿԻ



Կառավարութիւնը երեկ կէսօրէ ետք Նախագահական պալատին մէջ գումարեց իր ընթացիկ նիստը՝ Նախագահութեամբ հանրապետութեան Նախագահ զօր. Միշէլ Անլի եւ ներկայութեան վարչապետ Դասսան Տիապի:

Նիստին ընթացքին Նախագահ Անլն յայտնեց, որ Նախարարաց խորհուրդին կողմէ երեք ամիս առաջ տրուած այն որոշումը, որ պէտք է Կեդրոնական դրամատան հաշիւները քննութեան յանձնարուին, տակաւին չէ գործադրուած:

Ան հարց տուաւ՝ հաշուեքննիչ ընկերութիւններուն հետ պայմանագիրները ստորագրելու ուշացումին մասին:

Նախագահ Անլն հաստատեց, որ Կեդրոնական դրամատան պարագային սովորական հաշուեքննութիւնն ու կեդրոնացեալ քննութիւնը պէտք է զուգահեռ ընթանան, որպէսզի կարելի ըլլայ բացայայտել Լիբանանի մէջ դրամական եւ ելեմտական իրավիճակին իսկական դրոպաւորմանները, ինչպէս նաեւ կարենալ ճշդել, թէ Կեդրոնական դրամատան իսկական հաշուեկշիռը ի՞նչ է, շահերն ու վնասները ի՞նչ են եւ օտար դրամանիշի դրամատան պահեստը որքա՞ն է:

Իր կարգին վարչապետ Տիապ շեշտեց, որ ցաւալի է այն իրականութիւնը, թէ ոմանք կը փափաքին Լիբանանի փլուզումը տեսնել՝ տնտեսական եւ ելեմտական գետնի վրայ:

«Ցաւալի է, որ անոնք ամէն շանք ի գործ կը դնեն արգիւելու որեւէ օժանդակութիւն, ինչպէս նաեւ ճիգ չեն խնայեր արգելակելու Պէյրութի միջազգային օդակայանի վերաբացման ծրագիրը: Անոնք կը տարածեն տարածայնութիւններ, թէ լիբանանեան պետութիւնը Լիբանան բերելիք ամբողջեան տոյարի յստակ ու սահմանափակ գումար մը ճշդած է: Ես կը հաստատեմ, որ նման որոշում չկայ: Ծամբորդները Լիբանան թող բերեն որքան տոյար որ կ'ուզեն, ո՛չ ոք պիտի արգիլէ անոնց: Ընդհակառակն՝ մենք կոչ կ'ուղղենք Լիբանան վերադարձող արտերկրի լիբանանցիներուն, որ իրենց հետ ամերիկեան տոյար ունենան՝ օժանդակելու համար իրենց ընտանիքին եւ շրջապատին: Թող անոնք չհաւատան այն «սեւ բերան»-ներուն, որոնք տարածայնութիւններ կը սփռեն», ըսաւ ան:

Անդրադառնալով լիբանանեան ջուրերուն մէջ գտնուող ծովային տնտեսական յատուկ տարածքին՝ վարչապետ Տիապ հաստատեց, որ լիբանանեան ազգային գերիշխանութիւնը սուրբ է եւ օրինական բոլոր ձեւերով պէտք է պահպանել այդ սրբութիւնը: «Մեր բնական հարստութենէն ոչ մէկ աւագի հատիկ, ոչ մէկ ջուրի կաթիլ պիտի զիջինք. վերջապէտ», հաստատեց Տիապ:

Փոխվարչապետ, պաշտպանութեան Նախարար Չէյնա Աքքըր յայտնեց, որ հիկն ամիս ետք՝ իբրեւ կառավարութիւն, պէտք է մենք մեզի հարց տանք, որ ի՞նչ էին մեր ծրագիրները եւ ի՞նչ արդիւնք կոցանք արձանագրել:

«Ամերիկեան տոյարին արժեքը հետզհետէ կը բարձրանայ, անոր դիմաց լիբանանեան դրամանիշը կ'արժեզրկուի, իսկ շուկային մէջ կայ արտադրութիւններու հսկայական սղած մը, որ կը խեղդէ քաղաքացիները: Դետեաբար, մենք ստիպուած ենք քաղաքական եւ թեքնիք լուծումներ ապահովել: Մենք պէտք չէ աշխատինք օժանդակութիւններ ստանալու ուղղութեամբ, այլեւ՝ բարեկարգումներ գործադրելու», ըսաւ ան:

Նիստէն ետք կրթութեան եւ բարձրագոյն ուսման Նախարար Թարքե Մաժուպ Նշեց, որ կառավարութիւնը համաձայն գտնուած է կրթական մարզին 500 միլիար Լ. ոսկիի յատկացում մը տրամադրելու:

Միւս կողմէ, տնտեսութեան եւ առեւտուրի Նախարար Ռաուու Լաամէ յայտնեց, թէ ինք այսօր պիտի հրապարակէ որոշում մը, որուն համաձայն, 900 կրամ կշռող լիբանանեան հացին սակը պիտի բարձրացնէ 2000 Լ. ոսկիի:

Լաամէ յայտնեց, որ Նախարարութիւնը պիտի շարունակէ օժանդակել հացի արտադրութեան համար կարելու բաղադրիչներուն, ինչպէս նաեւ պիտի աշխատի ընդարձակել սննդղէնի տեսակակին, որուն օժանդակութիւն պիտի յատկացուի: «Մեր Նպատակն է օժանդակութիւնը հասցնել այն աստիճանի, որ քաղաքացիին գնած սննդղէնին 70 առ հարիւրը մատչելի գիներով արտադրութիւններ ըլլան՝ կանխարգիլելու համար անօթութիւնը», հաստատեց ան:

Աքքըր իր կարգին յայտնեց, որ հացի սակին բարձրացումին մասին կառավարութեան Նիստին ընթացքին քննարկում տեղի չէ ունեցած:

Շար.ը՝ էջ 4

«ԼԻՊԻՈՅ ՄԷՁ ԹՈՒՐՔԻՈՅ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ
ՔՐԵԱԿԱՆ ԵՒ ՊԱՏՄԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԹԻՒՆ Կ'ԵՆԹԱԳՐԵՆ»

Կ'ԸՍԷ ՄԱՔՐՈՆ

Ֆրանսայի Նախագահ Էմանուէլ Մաքրոն Գերմանիոյ մէջ այդ երկրի վարչապետին՝ Անկէլա Մերքելին հետ հանդիպումէն ետք, լրագրողներու հարցումներուն պատասխանելով, յայտարարած է, թէ ՕԹԱՆ-ի անդամ եղող Թուրքիան պէտք է քրեական եւ պատմական պատասխանատուութիւն կրէ Լիպիոյ մէջ տեղի ունեցող քաղաքացիական պատերազմին համար:

Շար.ը՝ էջ 4



ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ Կ'ԱՁԱԿՅԻ
«ՆԱՀՏԱ» ԱՄԲԱՐՏԱԿԻ ՏԱԳՆԱՊԻ ԼՈՒԾՄԱՆ
ԱԲՐԻԿԵԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՋԱՆՔԵՐՈՒՆ

ՄԱԿ-ի Ապահովութեան խորհուրդը Եթովպիոյ կառուցած «Նահտա» ամբարտակի տագնապին նուիրած նիստին ընթացքին աջակցութիւն յայտնեցին Եթովպիոյ, Եգիպտոսի եւ Սուտանի միջեւ լարուածութիւն յառաջացուցած ամբարտակի հարցի լուծման Ափրիկեան միութեան ջանքերուն:

Յատուկ Եգիպտոսի, Ապահովութեան խորհուրդի նիստի գումարման կոչ ուղղած Միացեալ Նահանգներու դեսպան Քելի Քրաֆթ յայտնեց. «Այս խնդիրը խորհուրդին ներկայացուած է, որովհետեւ ժամանակը կարճ է, եւ համայնութեան հասնելու պատուհանը կրնայ արագ



փակուիլ»: Ան խնդրոյ առարկայ երեք երկիրներուն կոչ ուղղեց՝ խուսափելու որեւէ քայլէ, որ կրնայ վնաս պատճառել համաձայնութեան հասնելու հարկաւոր բարիկամեցու

ղութեան: Նիստի ընթացքին բազմաթիւ խօսք առնողներ Նոյն կէտը շեշտեցին՝ Նշելով, որ այս թղթածրարը այլեւս Ափրիկեան միութեան յանձնուած է:

ՉԻՆԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ
ՎԱԵՐԱՅՈՒՅ ՀՈՆԿ ՔՈՆԿԻ ԱՉԳԱՅԻՆ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՕՐԵՒՔԸ

Չինաստանի Ժողովրդական Ներկայացուցիչներու համաշինական ժողովի՝ բարձրագոյն օրէնսդիր մարմինի մայրուն յանձնախումբը որդեգրած է Զոնկ Ընկի մէջ ազգային անվտանգութեան վերաբերող օրինագիծը:

Այս մասին կը հաղորդէ «Սաուր Չայնա Մոնիթինկ Փոսթ» օրաթերթը:

Շար.ը՝ էջ 4



ՄԵԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ ԿՐՆԱՆ ԹՈՒՐՔԻԱՅԷՆ
ՉԵՌՔ ԶԳԵԼ ՌՈՒՄԱԿԱՆ «ԷՍ-400» ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

Միացեալ Նահանգներ 2021 թուականին, պաշտպանական պիտոճի պաշտպանութեան պիտոճի օրէնքին մէջ առաջարկուող փոփոխութեան որդեգրման պարագային, թրեւս, կարելիութիւն ունենան Թուրքիայէն ձեռք բերել ռուսական «Էս-400» հակաօդային պաշտպանութեան համակարգեր: Այս մասին կը հաղորդէ ռուսական «ՌԻԱ Նովոսթի» լրատու գործակալութիւնը՝ յղում կատարելով «Տիֆթես Նիուզ»-ին:

Այդպիսի փոփոխութեան առաջարկ կատարած է հանրապետական ծերանուական ճոն Թիուկը: Միւս կողմէ, Շերակոյտի արտաքին յարաբերութիւններու յանձնախումբի Նախագահ Ճին Ռիշ, որ

Թուրքիոյ Նախագահ Ռեճեփ Թայիփ Էրտողանի վարած քաղաքականութեան սուր քննադատներէն է, իր կարգին կ'առաջարկէ կատարել փոփոխութիւն, որով Թարմիի վարչակազմը հնարաւորութիւն պիտի ստանայ օրէնքի որդեգրումէն ետք երեսուն օրերու ժամկետի մէջ պատժամիջոցներ հաստատել Թուրքիոյ դէմ:

Յիշեցնենք, որ ռուսական «Էս-400» հակաօդային պաշտպանութեան համակարգերու մատակարարումը, հակառակ Թուրքիա-Միացեալ Նահանգներ յարաբերութիւններուն մէջ այդ պատճառով ի յայտ եկած ճգնաժամին, մեկնարկած է յուլիս 2019-ի կէսերուն: Ուաշինկթըն Անգարայէն պահանջած էր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ԱԶՐԳԷՅՃԱՆԻ
ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՅ ՆԱԽԱՐԱՐՆԵՐՈՒ
ԱՌՅԱՆՑ ՀԱՆԳԻՊՈՒՄ



30 յուլիսին տեղի ունեցաւ Դայաստանի եւ Ազրայէճանի արտաքին գործոց Նախարարներ Չոհրաբ Մնացականեանի եւ Էլմար Մամետարովի առցանց հանդիպումը ԵԱՀԿ Մինսքի խմբակի համանախագահներ Իկոր Փոփովի (Ռուսիա), Սթեֆան Վիքսնթի (Ֆրանսա), Էնտրիկ Շոֆըրի (Միացեալ Նահանգներ), ինչպէս նաեւ ԵԱՀԿ գործող Նախագահի անձնական ներկայացուցիչ Անճէլ Զասիքիչի միջնորդութեամբ եւ մասնակցութեամբ:

Շար.ը՝ էջ 3

ՄԻՆՍՔԻ ԽՄԲԱԿԻ ՀԱՄԱՆԱԽԱԳԱՀՆԵՐ.
«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՏԱԳՆԱՊԸ
ՌԱԶՄԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄ ՉՈՒՆԻ»

Լեռնային Ղարաբաղի հակամարտութիւնը ռազմական լուծում չունի: «Արմէնփրես»-ի հաղորդումով, այս մասին ըսուած է ԵԱՀԿ-ի կայքով տարածուած հաղորդագրութեան մէջ, որ կը վերաբերի Դայաստանի եւ Ազրայէճանի արտաքին գործոց Նախարարներուն հետ տեղի ունեցած առցանց հանդիպումին:

Շար.ը՝ էջ 4

ԵՐԵՔ ԿՈՒՍԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ
ՍՏԵՂԾԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ԽՈՒՄԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ



30 յուլիսին Բարգաւաճ Դայաստան, Դայ յեղափոխական դաշնակցութիւն եւ Դայրէիք կուսակցութիւններուն կողմէ Դայաստանի Դանրապետութեան գլխաւոր դատախազութեան ներկայացուցեալ 9 էջեր բաղկացած՝ Դայաստանի Զրեական օրէնագիրքի 3 յօդուածներով սահմանուած յանցագործութիւններու մասին հաղորդում:

Շար.ը՝ էջ 4

ԲՀԿ, ՀՅԴ ԵՒ ՀԱՅՐԵՆԻՔ
ԿՈՒՍԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ
ՅԱՆՑԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ
ՀԱՂՈՐԴՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅԻՆ



Երեկ՝ երեքշաբթի, 30 յուլիսին Բարգաւաճ Դայաստան, Դայ յեղափոխական դաշնակցութիւն եւ Դայրէիք կուսակցութիւնները յանցագործութեան մասին հաղորդում ներկայացուցին Դայաստանի Ընդհանուր դատախազութիւն՝ պահանջելով քրեական գործ յարուցել օրէնսդիր իշխանութեան ներկայացուցիչներու եւ բարձրաստիճան պաշտօնատար այլ անձերու յանցակցութեամբ առանձնապէս ծանր յանցանքներ կատարելու փաստերու առիթով:

Լիազօր ներկայացուցիչները միացեալ հաղորդումը ներկայացնելէ ետք հանդէս եկան զրոյցով մը:

Շար.ը՝ էջ 4

ԼԻԲԱՆԱՆԻ ՄԵՋ «ՔՈՐՈՆԱ» ԺԱՅՐՈՎ ՎԱՐԱԿՈՒԱԾՆԵՐՈՒՆ ԹԻԻԸ ՀԱՍԱԻ 1778-Ի, ՄԱՀՈՒԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐՈՒՆԸ՝ 34-Ի, ԻՍԿ ԱՊԱՔԻՆԱԾՆԵՐՈՒՆԸ՝ 1183-Ի

ՄԻՆՉ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶՕՐԱՇԱՐԺԸ ԿԵՐԿԱՐԱԶԳՈՒԻ ՄԻՆՉԵՒ 2 ՕԳՈՍՏՈՍ, ԱՅՍՕՐ ՊԵՅՐՈՒԹԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԴԱԿԱՅԱՆԸ ԿԸ ՎԵՐՍԿՄԻ ԻՐ ԱՇԽԱՏԱՆՔԻՆ

Պաշտպանության գերագույն խորհուրդին առաջարկով, երեկ Լիբանանի մեջ «Զորոնա» համաճարակին դեմ պայքարելու եւ այդ ժաիրին տարածումը կանխարգիլելու նպատակով յայտարարուած ընդհանուր զօրաշարժը երկարաձգուեցաւ մինչեւ 2 օգոստոս:

Միւս կողմէ սակայն, Պէյրութի միջազգային օդակայանը այսօր կը վերսկսի իր աշխատանքին:



Առողջապահության նախարարության տեղեկութիւններուն համաձայն, երեկ Լիբանանի մեջ «Զորոնա» ժահրով վարակուածներուն թիւը հասաւ 1778-ի՝ վերջին 24 ժամուան ընթացքին արձանագրելով 33 նոր վարակուածներ, որոնցմէ 27-ն տեղացիներ են, իսկ 6-ը Լիբանան ժամանած արտերկրի լիբանանցիներ:

Նախարարութիւնը յայտնեց, որ ցարդ «Զորոնա» ժահրով 34 վարակուած պարագաներ մահացած են, իսկ 1183 ուրիշներ՝ ապաքինած:

Առողջապահության նախարարութիւնը հրապարակեց հաղորդագրութիւն մը՝ կոչ ուղղելով Պէյրութ ժամանող բոլոր ճամբորդներուն՝ կառչած մնալու որոշ միջոցառումներու, որոնք են.

- Արձանագրուիլ առողջապահության նախարարության ելեկտրոնային հարթակին:
- Պէյրութի միջազգային օդակայան ժամանող բոլոր ճամբորդները պիտի ենթարկուին «Զորոնա» ժահրի ախտորոշման «Փի. Սի. Ար.»-ի քննութեան:
- Այն ճամբորդները, որոնք «Փի. Սի. Ար.»-ի քննութեան ենթարկուած են, պետք է իրենց հետ ունենան այդ քննութեան արդիւնքները, որոնք առաւելագոյնը 48 ժաման պետք է ըլլան: Անոնք ստիպուած են մեկուսանալ, մինչեւ որ Պէյրութի միջազգային օդակայանին մեջ իրենց ենթարկուած «Փի. Սի. Ար.»-ի քննութեան արդիւնքները հրապարակուին:
- Արտերկրի լիբանանցիները, որոնք առանց «Փի. Սի. Ար.»-ի քննութիւն կատարելու Պէյրութ կու գան, պետք է քնակարանային մեկուսացման ենթարկուին մինչեւ առաջին «Փի. Սի. Ար.»-ի քննութեան արդիւնքին հրապարակումը, իսկ անկէ երեք օր ետք, պետք է ենթարկուին երկրորդ «Փի. Սի. Ար.»-ի քննութեան մը:
- Երկրորդ «Փի. Սի. Ար.»-ի քննութիւնը կատարելու գծով առողջապահության նախարարութիւնը ճամբորդները «Եւ. Էմ. Եւ.»-ով տեղեակ կը պահէ, թէ այդ քննութիւնը ինչ ո՞ր տարրալուծարանի մեջ պետք է կատարէ:
- Առողջապահության նախարարութիւնը «Փի. Սի. Ար.»-ի քննութեան արդիւնքը «Եւ. Էմ. Եւ.»-ով կ'ուղարկէ ճամբորդներուն՝ անոնց տրամադրութեան տակ դնելով նաեւ քննութեան արդիւնքին ելեկտրոնային տարբերակը:
- «Փի. Սի. Ար.»-ի քննութեան դրական արդիւնք ստանալու պարագային պետք է առողջապահության նախարարութեան հետ գործակցիլ կառավարական որբէ հիւանդանոց փոխադրուելու համար: Այս նպատակով պետք է դիմել առողջապահության նախարարութեան «Զորոնա»-ի բաժանմունքին յատուկ թէժ գիծին՝ 01-594459:

Միւս կողմէ, առողջապահության նախարար Յամատ Յասան երեկ Զարոնթիւրայի կառավարական հիւանդանոցէն տուած իր մամլոյ ասուլիսին ընթացքին յայտնեց, որ Լիբանան կը շարունակէ դեղորայքի արտադրութիւնը՝ պահպանելով միջազգային բոլոր չափանիշները եւ ապահովելով ան արդիւնքներ:

Յասան շեշտեց, որ իրենց կը քաջալերեն Լիբանանի մեջ դեղորայքի ճարտարարուեստը եւ կոչ կ'ուղղեն լիբանանցի ներդրողին՝ այս մարզին մեջ ներդրումներ կատարելու, որպէսզի կարելի ըլլայ լիբանանեան դեղորայք արտադրել եւ արտածել:

Իրանեան դեղորայքին մասին հարցումի մը պատասխանելով՝ Յամատ Յասան յայտնեց. «Ոչ մէկ դեղի նկատմամբ մեր մօտեցումը քաղաքական դիտանկիւնէ կարելի է մեկնել, իսկ իրանեան դեղորայքը միջազգային բոլոր օրէնքներուն ու չափանիշներուն ենթակայ է»:

«ՔՈՐՈՆԱ» ԾԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՀՏԱՊԻ ՖՈՒՏ

- Անահիտ Բագրատունիի մահուան առիթով՝

- Տէր եւ տիկին Բենիամին Պաշտեման 150.000 լ.ո.
- Տէր եւ տիկին Վահէ Է Լենա Պոզոյեան 600.000 լ.ո.
- Տէր եւ տիկին Անտոյիս Սուլաիեան 200.000 լ.ո.

ՊՐԻԵՍԵՆԻ Դ. ԽՈՐՀՐԴԱԺՈՐՈԿԻՆ

«ԼԻԲԱՆԱՆԸ ՊԵՏԷ Է ԶԵՐԸ ԿԱՅՈՒՅԵԼ ՍՈՒՐԻԱՅԻՆԵՐՈՒՆ ԴԵՄ ՈՐԴԵԳՐՈՒԵԼԻԲ ՊԱՏԺԱՄԻՋՈՅՆԵՐՈՒՆ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ, ՅԱՏԿԱՊԵՄ «ՄԻՋԸՐ» ԱՄԵՐԻԿԵԱՆ ՊԱՏԺԱՄԻՋՈՅԻՆ»

ԾԵՏԵՏ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԱՊ



Վարչապետ Յասան Տիապ երեկ ելեկտրոնային կապով մը մասնակցեցաւ «Սուրիոյ եւ շրջանի ապագային զօրակցութեան» Պրիւքսելի Դ. խորհրդաժողովին, որուն ընթացքին իր արտասանած խօսքին մեջ շեշտեց, որ Լիբանան պիտի շարունակէ գործակցիլ՝ ի խնդիր սուրիացի տեղահանուածներուն տառապանքին մեղմացման, ինչպէս նաեւ հիւրընկալ երկիրներու կարողութիւններուն ամրապնդումին:

Վարչապետ Տիապ յայտնեց, որ «Զորոնա»-ի համաճարակին եւ Սուրիոյ տագնապի քաղաքական լուծման բացակայութեան լոյսին տակ ամենէն աւելի տուժողները կ'ըլլան սուրիացի տեղահանուածները: Ան շեշտեց, թէ Լիբանանի կառավարութիւնը կ'աշխատի փրկել երկիրը, որ լուրջ տագնապներու մեջ է, եւ այդ տագնապներուն պատճառով ալ անոր քաղաքացիներուն մեծ մասը վերածուած են տկար հասարակութեան:

«Լիբանանը պետք է գերծ կացուցել սուրիացիներուն դեմ որդեգրուելիք պատ-

ժամիջոցներուն ՅԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ, յատկապէս «Սիզը» ամերիկեան պատժամիջոցին», շեշտեց վարչապետ Տիապ՝ աւելցնելով, որ սուրիացի տեղահանուածներուն թղթածրարի լուծումը կը կայանայ անոնց ապահով տուողարձին մեջ, եւ ընդգծեց, որ Սուրիոյ տագնապին քաղաքական լուծում ապահովելը պետք է կապել տեղահանուածներուն տուողարձին հետ:

Միւս կողմէ, վարչապետ Տիապին որոշումով, պետական հաստատութիւններուն, վարչութիւններուն, քաղաքապետարաններուն եւ քաղաքապետական համադաշնակցութիւններուն մեջ յաւելեալ ժամեր աշխատելու որոշութիւնը այսօրուցն սկսեալ վերջ պիտի գտնէ:

Նշենք, որ վարչապետարանի տեղեկատուական գրասենեակը երեկ յայտնեց, որ վարչապետ Տիապ երեկ ՄԱԿ-ի մեջ լիբանանեան ներկայացուցչութեան կողմէ՝ արտաքին գործոց նախարարութեան միջոցով տեղեակ պահուած է, թէ Լիբանան ներդրուած է ՄԱԿ-ի 75-րդ ընդհանուր ժողովին փոխնախագահներէն մէկը:

ԱՐՏԱՔԻՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՅԱՆՁՆԱՍՈՒՄԸ ՊԱՀԱՆՁԵՅ ԵՐԿՈՒՄՏԵՔ ԳՈՐԾԱԴՐԵԼ ՎԻԵՆԱՅԻ ՀԱՄԱԶԱՅՆԱԳԻՐԸ՝ ԸՆԴԳԾԵԼՈՎ, ԹԷ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՄՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԿԱՐՄԻՐ ԳԻԾ Է

Արտաքին եւ արտերկրի լիբանանցիներու հարցերու խորհրդարանական յանձնախումբը գումարեց իր նիստը՝ նախագահութեամբ Երեսփոխան Եւսիս ժապերի եւ ներկայութեան արտաքին գործոց եւ արտերկրի լիբանանցիներու հարցերու նախարար Նասիֆ Յիթթիի, արդարութեան նախարար Մարի Զլոտ Նաժմի, խորհրդարանի փոխնախագահ Էլի Ֆըրզլիի, ինչպէս նաեւ յանձնախումբի անդամներուն, որոնց կարգին՝ ՅՅԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ, Երեսփոխան Յակոբ Բագրատունիի:

Նիստէն ետք ժապեր շեշտեց, որ իրենք պատրաստ են բաց եւ Լիբանանի շահերը ապահովող ամեն տեսակ ընտրութիւններու մաս կազմելու, ինչպէս նաեւ Լիբանանի բարեկամ բոլոր երկիրներուն օժանդակութիւնը ապահովելու:



վող ընտրութիւններ կատարելու:

«Գործնապէս այս ընթացքը Լիբանանի մեջ առկայ է, սակայն կայ կարմիր գիծ մը, որուն շրջանցումը արտօնելի է, եւ այդ կարմիր գիծը լիբանանեան ազգային միասնականութեան դպչիլ է: Առանց մեր ազգային միասնականութեան մենք մեր երկրին դիմագրուած տագնապներէն ոչ մէկը կրնանք լուծել ո՛չ ելեմտականը, եւ ո՛չ ալ ու-

րիշ տագնապներ», ըսաւ ժապեր:

Ան աւելցուց, որ նախարար Յիթթիէն պահանջած են, որ դիւանագիտական գործունեութեան շրջագիծին մեջ Կիւնայի համաձայնագիրը երկուստեք գործադրուի, յատկապէս նկատի ունենալով Լիբանանի մեջ Միացեալ Նահանգներու դեսպան Տորըքի Շիպիի հետ պատահած դէպքը:

Շար. ք՝ Է 2

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԿԱՐԾ ԼՈՒՐԵՐ

●ԶԱՆԱԴՊԵՏՈՒԹԵԱՆ միւֆթի շէյխ Ապտէլ Էմիր Տըրիխ երեկ Տար Ֆաթուայի մեջ ընդունեց Պաշտպանության գերագույն խորհուրդի ընդհանուր քարտուղար, հազարապետ-զօրավար Մահմուտ Ասմարը, որուն հետ ընտրեց «Զորոնա»-ի համաճարակին դեմ մղուած պայքարին մանրամասնութիւնները: Միւֆթի Տըրիխի այցելեց նաեւ Կեդրոնական դրամատան նախկին փոխկառավարիչ Սոհամետ Պասսի-րի, որ հաստատեց երկրին մեջ քաղաքական կամիք գոյութեան կարեւորութիւնը՝ բարեկարգումի անհրաժեշտ քայլերուն դիմելու իմաստով:

●ՃԱՐՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ նախարար Իմատ Յուպպա երեկ հանդիպում ունեցաւ Լիբանանի մեջ ֆրանսական դեսպանատան տնտեսական կցորդ Ֆրանսուա տը Ռիբլի-վիսի հետ: Ընտրութեան լիբանանեան-ֆրանսական տնտեսական եւ ճարտարարուեստի մարզերուն մեջ երկկողմանի յարաբերութիւնն ու գործակցութիւնը՝ ընդգծելով այդ յարաբերութիւնները ամրապնդելու կարեւորութիւնը: Տը Ռիբլի-վիսի հաստատեց, որ Ֆրանսա Լիբանանի գլխաւոր գործընկեր է եւ կը շարունակէ զօրակցիլ անոր:

●ՆԵՐԺԻՆ գործոց եւ քաղաքապետութեանց հարցերու նախարար Սոհամետ Ֆահմի երեկ նախարարութեան կեդրոնին մեջ ընդունեց Յզօր հանրապետութիւն պլոքի Երեսփոխան Ուեհպէ Զաթիշան, որուն հետ ընտրեց լիբանանեան իրադարձութիւնները:

●ԵՐԵՄՈՒՆՆԻ Նուհատ Մաշնուր երեկ կոչ ուղղեց կառավարութեան՝ ՄԱԿ-ի Ապահովութեան խորհուրդին բողոք ներկայացնելու՝ «Պլոք 9» նաւթահորի պղծման խրախուսեան կառավարութեան որոշումին վերաբերեալ: Մաշնուր հաստատեց, որ «Պլոք 9» նաւթահորը կը գտնուի Լիբանանի եւ Իսրայէլի միջեւ վիճաբարոյ տարածքի մեջ, հետեւաբար անկիւ լիբանանեան գերիշխանութեան դէմ ոտնձգութիւն կը նկատուի եւ միջազգային համաձայնագիրներու խզում: Ան շեշտեց նաեւ, որ ծովային սահմաններու ոտնձգութիւնը շարունակութիւնը կը նկատուի խրախուսեան ոտնձգութիւններուն, որոնք, ՖԻՆԻԼ-ի ուժերուն հրամանատարին վկայութեամբ, օրական դրութեամբ կը գործուին լիբանանեան գերիշխանութեան դէմ:

Շար. ք՝ Է 2

ՊԵՐԻԻ ՔԱՆԱՆԵՆ ՍՏԱՅԱԻ ԵԼԵԻՄՏԱԿԱՆ ՀԱՐՅԵՐՈՒ ԵՒ ՊԵՏԱԿԱՆ ԱՄՆՎԱՐԿԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱՍՈՒՄԻՆ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ



Խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրի երեկ Այն Ռի-նէի մեջ ընդունեց ելեմտական հարցերու եւ պետական ամավարկի խորհրդարանական յանձնախումբի նախագահ, Երեսփոխան Իպրահիմ Զանաանը՝ ներկայութեան երեսփոխան Ալի Յասան հալիլի:

Յանդիպումէն ետք Զանաան յայտնեց, որ Պըրրիի յանձնած է ելեմտական հարցերու եւ պետական ամավարկի խորհրդարանական յանձնախումբին տեղեկագիրը, ինչպէս նաեւ ընտրեց ամավարկի որդեգրուելիք քայլերը:

Ան շեշտեց, որ ինք այսօր հրաւիրած է մամլոյ ասուլիսի մը, որուն ընթացքին պիտի բացատրէ տեղեկագիրը, որպէսզի ան յստակ ըլլայ բոլորին համար:

«Մենք պարկեշտ կերպով աշխատած ենք, եւ մեր նպատակը դրամատուններուն մեջ անխտիր բոլոր հաշիւ ունեցողներուն գումարները պաշտպանել է», հաստատեց Զանաան՝ աւելցնելով, որ այսօրուան մամլոյ ասուլիսին ընթացքին բոլոր տուեալները, թիւերն ու ենթահողերը պիտի ներկայացուին:

Միւս կողմէ, Պըրրի նախագահեց Ամալ շարժումի դեկավար խորհուրդի արտակարգ նիստին, որուն ընթացքին ընտրութեան լիբանանեան իրադարձութիւնները՝ քաղաքական, տնտեսական, ընկերային եւ ելեմտական, յատկապէս նկատի ունենալով Սուրիոյ պարտադրուած «Սիզը» ամերիկեան պատժամիջոցն ու Լիբանանի վրայ այս քայլին ունեալիք հետեւանքները, ինչպէս նաեւ Ամալ շարժումին յատուկ կազմակերպական հարցերը:

Պըրրի շեշտեց, որ ամերիկեան տուարին դիմաց լիբանանեան դրամանիշին արժեզրկումը կ'ենթադրէ, որ կառավարութիւնը, Կեդրոնական դրամատունն ու Դրամատուններու միութիւնը երկրին մեջ ելեմտական արտակարգ իրավիճակ յայտարարեն եւ վերատեսութեան ենթարկեն բոլոր այն միջոցները, զորս որդեգրած են՝ պաշտպանելու համար լիբանանեան դրամանիշը:

«Ո՛վ որ կը հաւատայ, թէ Միջազգային դրամական ֆոնտը կամ միջազգային որբէ օժանդակող երկիր կամ կազմակերպութիւն Լիբանանին պիտի օգնեն մէկ դուշով իսկ, եթէ Լիբանան բարեկարգումներ չկատարէ» սկսելով ելեկտրականութեան մարզէն, հասնելով մինչեւ քաղաքացիական անվտանգութեան պաշտպանութեան:

Պըրրի ընդգծեց, որ «Սիզը» պատժամիջոցին մասին իրենց կեցուածքը կը ընդդռնուի Սուրիոյ հաւատարիմ դաշնակիցը մնալու կեցուածքով, որովհետեւ Սուրիա՝ իբրեւ մեր դաշնակիցը, իր կարգին մնալուն կերպով զօրակցած է մեզի:

ԶՕՐ. ԱՌԻՆ ԸՆԴՈՒՆԵՅ ՄԵՌՏԱԿԱՆ ԱՐԱՔԻՈՅ ԴԵՍՊԱՆԱՆ ԶԻՆՈՒՐԱԿԱՆ ԿՅՈՐԴԸ



Լիբանանեան բանակի հրամանատար զօր. Ժոզեֆ Աուս երեկ Եարազի մեջ ընդունեց Լիբանանի մեջ Սեւտական Արաքիոյ դեսպանատան զինուորական կցորդ, գնդապետ-զօրավար Մանսուր պըն Սոհամետ Թուրքին, որուն հետ ընտրեց լիբանանեան եւ սեւտական բանակներուն միջեւ յարաբերութիւններն ու գործակցութիւնը ամրապնդելու հեռանկարները:

Միւս կողմէ, բանակը երեկ յայտարարեց, որ խումբ մը երիտասարդներ նախանցեալ երեկոյեան փակած են Շաթիլայի շրջանը, ուր անձանք մը կրակած է եւ վիրաւորած գետինը գտնուող երիտասարդներէն մէկը:

Յաղորդագրութեան մեջ ընդգծուեցաւ, որ բանակը փութացած է դէպքին վայր եւ հակակշիռի տակ առած կացութիւնը, ինչպէս նաեւ բացած է հետաքննութիւն՝ ճշդելու համար կրակողը եւ ծեղարկալելու զայն:

Նշենք, որ բանակի հրամանատարութիւնը ընդգծեց, որ խորայնեան 4 օրանալէր խզած են լիբանանեան օդային տարածքները եւ թռիչքներ գործած են Եարունի, Այթարունի, Նաքուրայի, Ռըմէյի եւ Զֆարիլայի վերեւ՝ ոտնձգութիւն կատարելով լիբանանեան գերիշխանութեան դէմ:

ԵՐԿԽՕՍՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆԸ ԱՌՈՂՋ ԲԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԷ

Այս օրերին, երբ մեր երկիրը ներքաղաքական լարուածութեան մէջ է՝ մեր շուրջն ու մեզ հետ տեղի ունեցող իրադարձութիւնները

պատճառով, ոմանք շարունակում են Ղաշնակցութեան դէմ նոյն երգը երգել Ռոպերթ Քոչարեան եւ Սերժ Սարգսեան նախագահների հետ համագործակցութեան մասին: Զրտառապ նշանակութիւն ունի այսօր այդ հարցը, ի հարկէ՝ ո՛չ, բայց չեմ կարծում, թէ մարդիկ չգիտեն ինչ են անում: Եթէ նման իրապարակումները պարզաբանումներ ստանալու նպատակ հետապնդէին, ի հարկէ կարելի էր համապատասխան ձեւով արծագանգել դրանք, բայց երբ՝ «մեղադրական փաստերի հիման վրայ կարողացում են դատաւճիռներ», ի հարկէ ուշադրութիւն դարձնելու կարիք չկայ, քանի որ Ղաշնակցութիւնը որեւէ մէկի առաջ արդարանալու անհրաժեշտութիւն չունի: Այնուամենայնիւ երեւոյթը պարզաբանել արժէ, անդրադառնալով ԶՅԴ-իշխանութիւնների նախորդող երկու տասնամեակների եւ դրանից էլ այն կողմ անցնող փոխյարաբերութիւնների թեմային:

Նախ, եթէ իշխանութիւնների հետ փոխյարաբերութիւնների հարցն է մշտնջերմում ինչո՞ւ խնդիր չի քննում աւելի վաղ շրջանից, երբ Ղաշնակցութիւնը նաեւ համադրել է գործողութիւնները անկախ Զայաստանի առաջին իշխանութիւնների հետ՝ արցախեան պատերազմական գործողութիւնների հարցում, կայացման շրջանում, միջազգային ատենաներում, հայկական երկու հանրապետութիւնների հետապնդած խնդիրների, ֆինանսական եւ ոչ ֆինանսական աջակցութիւնների ուղղութեամբ, օժանդակել է Զայաստանի նորատեղծ դիւսնագիտական ներկայացուցչութիւններին եւ այլն: Սա կրկնէմ այն տարիներին, երբ Զայաստանում իշխանութիւնը հայածում էր կուսակցութեանը, իսկ ԶՅԴ-ն ընդդիմադիր կոչու կեցումաձե էր որդեգրել:

Ի դէպ, եթէ նման համագործակցութիւնը այդքան մեծ մեղք է, ինչո՞ւ որեւէ քննադատութիւն չի հնչում այսօրուայ վարչապետի հասցեին, ով իր քաղաքական դատախարակութիւնը ստացել է ԶՅԸ-ի խոհանոցում, ով եղել է Լեւոն Տէր Պետրոսեանի դաշնակցութեւ 2008 թուականի ընտրութիւններում՝ առաջնորդուելով Արցախը յանձնելու փառաբորմով: Ինչ վերաբերում է Ղաշնակցութեանը, ապա յիշեցնել ես մէկ փաստ, որ գուցէ եւ դուր գայ Ղաշնակցութեան վարկով խիստ մտահոգներին: 1920 թուականի դէկտեմբերին, իշխանութիւնը պոլշեիկեան յեղկոմին յանձնելուց 1-2 օր անց ԶՅԴ բարձրագոյն մարմինը՝ Բիւրոն, շրջաբերական յիշք կուսակցութեան շարքերին, որով յայտնում էր, որ ինքը հարկադրաբար լքում է երկիրը, սակայն հազարաւոր դաշնակցականները կարող են ներգրաւուել պետական աշխատանքներում նոր իշխանութեան պայմաններում շարունակելով ծառայութիւնը հայրենիքին:

Բոլոր ժամանակներում Ղաշնակցութիւնը տարբերակել է պետութիւնը իշխանութիւնից եւ երբեք չի մտահոգուել, թէ պետութեանն իր ծառայութեամբ կարող է ուղղակի կամ անուղղակի ձեւով օգտաւար լինել նաեւ օրուայ իշխանութիւններին: Ղաշնակցութեան համագործակցութիւնների հարցը քննողները ինչո՞ւ չեն ցանկանում լուսաբանել նաեւ այն հարցը, որ, Փաշինեանի առաջարկին ընդառաջելով, Ղաշնակցութիւնը դաշինք կազմեց եւ նրա հետ, իսկ այն բանից յետոյ, երբ խզուեց այդ դաշինքը ընդդիմադիր դիրքորոշում որդեգրած ԶՅԴ-ն այդուհետ էլ շարունակեց աջակցութեան առաջարկներ ներկայացնել իր կողմից քննադատուող իշխանութեանը:

Այստեղ անդրադառնանք հարցին, թէ ինչո՞ւ մէկ դէպքում ստացուել է ուղղակի համագործակցութիւնը, իսկ այլ դէպքերում ոչ: Պատճառը շատ պարզ էմ անկնայտ է. ի տարբերութիւն առաջին եւ չորրորդ ղեկավարների, երկրորդն ու երրորդը չէին առաջադրում ամենագետի, ինքնասիրահարուածի եւ անհանդուրժողի բարդոյթներով եւ պատրաստ էին լսելու դիմադրին, քննարկելու եւ համատեղ լուծումներ փնտռելու ազգային այլեւայլ հիմնահարցերի վերաբերելով: Մօտ քսան տարի Ղաշնակցութեան ղեկավարութիւնը մշտական շփումների մէջ է եղել Զայաստանի բարձրագոյն ղեկավարութեան հետ: Յաճախ նման քննարկումները ստացել են բանաւճեների բնոյթ, յաճախ յաջողուել է ընդհանուր լուծումների յանգել, իսկ յաճախ էլ չի յաջողուել: Պատահել է նաեւ, որ տեսակետների բեւեռացում է եղել եւ օրինակ իշխանութեան դէմ Ղաշնակցութիւնը ձեռնարկել է իրապարակային պայքար: Յիշեցնել բոլորին յայտնի հայ-թուրքական արձանագրութիւնների օրինակը: Այն ժամանակ Ղաշնակցութիւնը մէկ կողմից ճնշում գործադրելով, իսկ միւս կողմից քաղաքական պայքարը չհասցնելով ներքին թշնամանքի փորձել իշխանութեանը համոզել ու ստիպել, որ ետ կանգնի թուրքերի հետ «հաշտութեան» սայթաքուն ճանապարհից: Որքան էլ զարմանալի կարող է

թուալ, բայց այդ պայմաններում Զայաստանի թիւ մէկ պաշտօնեան որոշեց շրջազայել Սփիւռքում եւ համազգային կարեւորութեան հարցի վերաբերելով լսել նաեւ սփիւռքահայութեան տեսակետը:

Հաւանաբար նա իրաշալի պատկերացում էր, թէ ի՞նչ է լսելու Սփիւռքում, ուր իրեն դիմաւորողների մի աշխուժ հատուածը դարձեալ դաշնակցականներն էին լինելու: Սփիւռքը իր քաղաքական եւ այլ բազմազանութեանը նոյնպէս եղաւ կոշտ, բայց ոչ թշնամական: Այդպէս հայ ժողովուրդը հայոց քաղաքական-պետական ուժերի հետ ձեւաւորում էր համազգային եւ ներպետական քաղաքական հանդուրժողութեան մշակոյթ՝ անկախ նրանից, թէ կողմերը ինչ տեսակէտ կ'ունենային միմեանց նկատմամբ, ինչն այսօր յաջողութեամբ փլուզում է Նիկոլ Փաշինեանը:

Ի դէպ, եթէ այդ մշակոյթը արմատներ նետած չլինէր մեր երկրում, չէր լինի նաեւ Նիկոլի թափշը, որովհետեւ այն ոչ թէ պայմանաւորուած էր ընդդիմութեան, այլ իշխանութիւնների հանդուրժողութեամբ՝ «յեղափոխականները» չէին յարձակուելու ուժայինների վրայ: Իսկ թէ Փաշինեանի պատկերացումներն ինչ էին ներքաղաքական-ներհասարակական փոխյարաբերութիւնների վերաբերելով, այսօր ակնշայտ է ներհայկական պատահականութեան եւ թշնամանքի, համատարած քրեական հետապնդումների, վախի սերմանման, ուժայինների բիրտ գործողութիւնների, օրէնքների ոտնահարման, մատուցութիւնների եւ ընդհանրապէս քաղաքական ընդդիմութեան յայտ ներկայացնողների դէմ քրեական, քաղաքական ու ամբիոսային ամբողջական յարձակում ձեռնարկելու մշակոյթի սերմանման պայմաններում:

Ինչ վերաբերում է 20 տարի երկիրը կառավարած իշխանութիւնների նկատմամբ Ղաշնակցութեան վերաբերմունքին, ապա այս հարցում ԶՅԴ քննադատներին խորհուրդ կը տամ բացել այդ տարիների ցանկացած օրուայ թերթերը եւ նրանք դժուար թէ դրանցում քննադատութիւններ չգտնեն գործող իշխանութիւնների հասցեին: Համացանցում շատ տարածուած են եղեանքայինշատիկ Վահան Յովհաննիսեանի կոչու ելոյթները ներկայացնող տեսանիւթեր: Այդ բոլոր տեսանիւթերը որ Լեւոն Տէր Պետրոսեանի իշխանութեան օրօք չեն նկարահանուել, հետաքրքիր է ո՞ւմ օրօք են արձանագրուել: ԶՅԴ բազմաթիւ գործիչների քննադատական նման ելոյթները բազմաթիւ են, եւ ում թուում է, թէ 2018 թուականին նոր թուարկութիւն է սկսուել կարող է մի քիչ քչփորել ձեռքի տակ եղած աղբիւրները եւ թարմացնել յիշողութիւնը:

Այս ամենին Ղաշնակցութեան անցելով մտահոգները տեղեա՞ր չեն, թէ այսօր այդպէս է պէտք:

Տուեալ երեւոյթին հետեւողները կարող են նկատել, որ տեղի ունեցող զուգակցում է ԶՅԴ-ի այսօրուայ վճռական դիրքորոշումների հետ՝ գործող իշխանութիւնների, մեր կարծիքով պետականաբանող գործունեութեան նկատմամբ: Այսինքն, այս գործընթացներում Ղաշնակցութեան դիրքերը թուլացնելու համար փորձ է արւում հարուածել նրան նաեւ կողքից ու թիկունքից, փորձել վարկաբեկել եւ ժողովրդին վանել ազգային խնդիրներով գործնականօրէն մտահոգ կուսակցութիւնից:

Արդեւ երկու տարի նոր ուժերը իշխանութեան լիակատար տօրօքնողներն են երկրում: Այս ընթացքում ոչ միայն խոստացուած բարեփոխումների հետքերը չկան, այլեւ ստեղծուած չեն այնպիսի հիմքեր եւ նախադրեալներ, որոնք գոնէ յուսալի ապագայի ակնկալիքներ կարող էին ներշնչել:

Դրա փոխարէն ոչ պալատական տնտեսագետներն ու այլ մասնագետները մնալ կանխատեսումներ են կատարում մօտակայ հեռանկարի հետ կապուած: Սրան զուգահեռ խայտառակ, եթէ չասնք ողբերգական իրավիճակ է համաճարակը յաղթահարելու ճակատում: Այս ամենին ինչպէ՞ս է արձագանգում իշխանութիւնը՝ յարձակումներով ընդդիմութեան դէմ, նոր դատավարութիւններով ու քրեական բնոյթի աղմկոտ մեղադրանքներով եւ հիմ սաստկացող քննադատութեամբ: Ուզեա, թէ չուզեա մտքիդ մէջ համեմատութիւններն են զուգահեռում, ինչպէս անցած դարի 20-ականներին, ետեսուններին եւ նոյնիսկ դրանից յետոյ խորհրդային միութիւնում ոչնչացում էր պետական-պաշտօնական զօին չիմադրատախանաղ ամէն ինչ: Յի՛ «յանցաւոր Եութեան ու գործունեութեան» բացայայտման եւ հետապնդման միուլցքով առաջնորդուել են մշտապէս նրանք, ովքեր ունակ չեն եղել լաւ բան անելու ժողովրդի համար, բայց հիւանդացած են եղել անասնձ ու անվերահսկել իշխանութեան տիրանալու մղագարութեամբ:

Ուրեմն խորքում այլ խնդիր է: Խորքում Զայաստանում տարածուած, բայց բարեբախտաբար, արագօրէն յաղթահարուող այն համաճարակն է, որը կարելի է անուանել Նիկոլապաշտութիւն:

ԱՐՏԱՆԵՍ ՇԱՀԱԶԵԱՆ

Շար.ը՝ էջ 4

ՍՈՐՎԵՑԷՔ ԶԵՐ ՈՒՆԵՑԱԾՈՎ ԳՈՀԱՆԱԼ

Նախորդ շաբաթ «Վանայ ծայն»-էն սփռուեցաւ հարցազրոյց մը, որուն ընթացքին ԶՅԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ, երեսփոխան Յակոբ Բագրատունի պատասխանեց տարբեր հարցումներու՝ ներլիբանանեան հարցերէն սկսելով մինչեւ հայութեան վերաբերող խնդիրներ:

Սակայն այս բոլորէն ականջիս յատկապէս դպաւ ապերախութեան նիւթը: Իսկապէս ազգային լուրջ հարցի մը վերաձուեցաւ ապերախութիւնը, որուն մասին արդէն իրապարակաւ կը խօսուի: Շատ կ'ուզեմ անդրադառնալ այս իրողութեան եւ մտածելու ու խոկալու նիւթ մը տրամադրել բոլոր ապերախներուն: Զարցազրոյցն չէ, որ ազդուեցաւ, սխալ մի՛ հասկնաք, այլ շատոնց կը հետեւիմ լիբանանահայ գաղութի իրադարձութիւններուն եւ անոնց իբրեւ հակազդեցութիւն լիբանանահայութեան արձագանգներուն: Ծի՜շո՛ղ է, Լիբանանէն հեռու եմ, սակայն ընկերային ցանցերուն մէջ արձանագրուող ժխտական մեկնաբանութիւնները՝ այս կամ այն դրական երեւոյթի մը, օգտակար ձեռնարկի մը կամ բարի արարքի մը հետ կապուած պերճախօս վկայութիւններ են լիբանանահայ հասարակութեան մէջ զարգացող ապերախութեան, որ, իմ կարծիքով, ուրիշ բան չէ, եթէ ոչ չափազանց շփացածութիւն: Այո՛, շփացած էք, սիրելի՛ լիբանանահայեր: Արդէն իբրեւ համայնք ձեր ունեցած անվիճելի առաւելութիւնները եւ լայն կարողութիւնները անտեսելով (ազգային գետնի վրայ), ձեր գաղութային գանձարանը՝ իր եկեղեցիներով, դպրոցներով, ակումբներով, կրթական, առողջապահական, բարեփոխական, մշակութային եւ ընկերային կառոյցներով, ոչինչ է ձեզի համար, արժէք չունի: Եթէ դուք օտարութեան մէջ Զայաստան ունենալով (այսինքն պետականաւճայել գանձան ազգային կառոյցներով շրջապատւած) դժգոհ էք եւ ապերախ, հապա ես ի՞նչ ըսեմ, որ օտարութեան մէջ առանձին, ոչ մէկ հայախօս ըմպել ունենալով անմիջական շրջապատի մէջ օրէ որ կը յամաշիմ հայ մնալու (ասիկա երբեք ինքնագովութիւն չէ, այլ պարզապէս արդար ընդվզում է):

«Գաղութը ծախեցին, դպրոցներ կը գոցուին, կուսակցութիւններ անտարբեր են, այսօր վիճակը այնպէս չէ, ինչպէս որ եր 40-50 տարի առաջ, կաթողիկոսարան, առաջնորդարան, երեսփոխաններ, քաղաքապետ, ծերանոց, դաշնակցական տղաք... Մէկ խօսքով՝ ամէն ինչ վատ է»: Խիղիք ունեց՛ք, սփիւռքի գաղութներէ շատեր ձեր ունեցածին մէկ հարիւրերորդ չունին: Օրինակ, ես՝ Ռուսիա ապրելով, ի ծեւ զուրկ էի հայերէն տղովու կարելիութենէ, որովհետեւ պարզապէս հայկական ոչ մէկ վարժարան կայ իմ ապրած շրջանիս մէջ, հակառակ անոր որ քսան հազարի չափ հայութիւն ունիւք: Դուք ձեր երեսփոխաններէն կամ քաղաքապետներէ՛ն դժգոհ էք, երանի՛ք ձեզի, որ քաղաքական ներկայացուցչութիւն ունիք, Ռուսիոյ մէջ աւելի քան երկու միլիոն հայութեամբ ո՛չ երեսփոխան ունիւք, ո՛չ ալ քաղաքապետ, որոնք մեր իրաւունքները եւ մեր շահերը պիտի ներկայացնեն եւ պաշտպանեն, մենք մեր բախտին ձգուած ենք իբրեւ փոքրամասնութիւն, մինչ դուք հովանաւորներ ունիք: Կուսակցութեա՞ր կը հայիոյեք, կը բամբասե՞ք, ապրի՛ք, սակայն մանուկի խանձարուրէն սկսած մինչեւ միջազգային տարողութիւն ունեցող հարցերով ամէն առիթի ակումբ կը դիմեք եւ կարելիութիւն ունիք զօրակցութիւն ու օգնութիւն ստանալու (վերջին շրջանին օժանդակութեանց բաշխումը ատոր պայծառ ապացոյցն է): Բայց մենք ո՞ր պիտի երթանք եւ որո՞ւ դիմենք: Պատերազմ ըլլայ կամ խաղաղութիւն ձեր կողմէ «փողոցային տղաք» կոչուած դաշնակցական տղաքը միշտ արթուն են, այո՛, անաղմուկ են լուռ ԿԸ ԳՈՐԾԵՆ եւ չեն դաւաճաներ ձեզի, երանի՛ք մենք ալ այս «փողոցային տղաքն» բռււ մը ունենայինք:

Նորէն կ'ըսեն, ԽԻՐԸՐԻՑԷԸ, կաթողիկոսարանը, առաջնորդարանը, ԶՅԴ-ի կոմիտեիներն, ԼԵՒԸ, ՁՈՒԸ, ԼՕԻԵ, ԶՄԸՄ-ը Զամազգայինը, ՎՅՖԻԼ-ը, ԲՄՅԼ-ը, թերթեր, ձայնասփոխ կայաններ, դպրոցներ, նոյնիսկ անկախարան, դարմասատուներ, ծերանոց, դժուար է հաշուել նոյնիսկ թէ ինչքա՞ն հաստատութիւններ կան ձեր կողքին: Ծի՜շո՛ղ է. այս բոլոր կազմակերպութիւնները անխալալկան չեն անշուշտ, որովհետեւ մահկանացու անձերու կողմէ կը ղեկավարուին, ոչ թէ իրեշխաններու, կրնան թերութիւններ ունենալ, կրնան սխալի կամ տկարանալ (իբրեւ կառոյց, ոչ թէ իբրեւ գաղափար, մի՛ շփոթեք), բայց եւ այնպէս անոնք բոլորը կ'ա՛ն, եւ, ինչ ալ ըլլան պայմանները, չեն դադրիր ձեզի ծառայելէ:

Կը հասկնա՞ք, ծառայութիւնը կարելու է, այս ծառայութեան շնորհիւ դուք իբրեւ հայ կ'ապրիք ծնունդէ մինչեւ մահ, քանի որ գաղութը պահելու կոչուած վերոյիշեալ կազմակերպութիւնները կրթական, Նիւթական, բարոյական եւ ֆիզիքական ապահովութիւն եւ զօրակցութիւն կու տան ձեզի: Այնպէս որ, այլեւս չըսե՛ք «մենք իմ պայքարիցը հայ մնալու համար»: Դուք չեք գիտեր իսկ ի՞նչ կը նշանակէ հայ մնալու պայքար մղել, երբ շուրջը ոչ դպրոց կայ, ոչ ակումբ, ոչ ճգնաժամային շտապներ, ոչ երեսփոխանական պլոքներ եւ այլն: Բախտաւոր էք որ՛ք, բայց չկրցաք հասկնալ ու արժեւորել այդ բախտաւորութիւնը: Ձեր պարմադրանքին կը գործէ իրն օրէնք էք, որ կ'ըսէ, թէ մարդը կամ իմ կորսնցնելէ ետք միայն անոր արժէքը կը գիտնայ: Ծիացուցին ձեզի գաղութը կերտած անցեալի նուիրեալները, այնքան շփացին, որ այսօր ձեր ունեցած քիչ եւ վատ կ'երեւի ձեր աչքին: Շա՛տ լաւ, եթէ այդպէս է, եկե՛ք իմ ապրած երկիրս, ին-

ՎԻՊԱԿ

«Ազդակ»-ի երեկուան թիւին 3-րդ էջով լոյս տեսած, Վրեժ-Արմէնի «Ամէն մէկս՝ մարտիկ Զայ դատի» խորագրեալ յօդուածին երկրորդ պարբերութիւնը կարդալ հետեւեալ ձեւով. «Զայ դատը բոլորիս դատն է, բոլոր՝ հայերուս դատն է: Զայ ըլլալ կը նշանակէ դատ մը ունենալ, կը նշանակէ այդ դատին տեր կանգնիլ, ատոր գիտակցիւք կամ ոչ: Զայ ըլլալը վերացական հասկացութիւն մը չէ, ոչ ալ պարզապէս ծագումի հարց մը...»:



չո՛ւ չէ նաեւ իմ ապրած շրջանս, ուր ոչ հայկական դպրոց կայ, ոչ ակումբ, ոչ ալ ազգային որեւէ կառոյց՝ մէկ հատիկ եկեղեցիէն գատ, եւ այն ատեն պիտի ըսեք, թէ ո՞ր իսկապէս վատ է կացութիւնը՝ Լիբանանի՛ մէջ, թէ՛՞ այլուր:

ՍԵՐՃ ՄՈՒՐԱՏԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ԱՃՐՊԷՅՃԱՆԻ ...

Շարունակում Ա. Էջէն

Առցանց հանդիպումին ընթացքին անդրադարձ կատարուեցաւ համավարակային պայմաններու մէջ խաղաղ գործընթացի շուրջ ստեղծուած իրավիճակին:

Զայաստանի արտաքին գործոց նախարարը ընդգծեց Ազրպեյճանի կողմէ հնչող ռազմատենչ եւ ապականուցողական յայտարարութիւններու անթոյլատրելիութիւնը՝ նշելով, որ անոնք վնաս կը հասցնեն խաղաղ գործընթացի միջավայրին եւ կը խոչընդոտեն ժողովուրդները խաղաղութեան նախապատրաստելու յանձնառութեան իրականացումը:

Միեւնոյն ժամանակ նախարար Մնացականեան կարելուր նկատեց Արցախի ժողովուրդի համապարփակ անվճար տանգութեան շարունակական ապահովման անհրաժեշտութիւնը, այդ կարգին՝ ազատ եւ անվտանգ տեղաշարժի միջոցով:

Հանդիպման ընթացքին քննարկուեցան առերես հանդիպումներու եւ համալսախազահներու շրջան այցելութեան կարելիութիւնները, որոնք կախեալ են համավարակային իրավիճակի զարգացումայէն: Միեւնոյն ժամանակ հաստատուեցաւ յառաջիկայ ամիս հեռավար կապով շփումները շարունակելու պատրաստութեան կարգով:



ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՊՈՒՐԸ ՀԱՄՈՒՏԻ ԲԱՂԱՔԱՅԻՆԵՐՈՒՆ
ԵՒ ԵԼԵԿՏՐՈՆԻ ՍԵՓԱԿԱՆ ՀԱՐԺԱՎԵՐՈՒՆ
ՏԵՐԵՐՈՒՆ՝ ՅՈՒՆԻՍ 2020-Ի ԵԼԵԿՏՐՈՆԻ
ՀՈՍԱՐՔԻ ՍԱԿՅՈՒՆ ՄԱՄԻՆ

Հիմնուելով ուժանիւթի նախարարութեան սակագոյցին վրայ, որ յունիս 2020-ին համար ճշդած է մէկ քիլուաթի նոր գին՝ 498 լիք. ոսկի, այսինքն՝ 50 առ հարիւրով յաւելումով մայիս 2020-ի 330 լիք. ոսկիի գինին վրայ, կը յայտարարենք.

Առաջին.- Պուրճ Համուտի քաղաքապետական տարածքին մէջ ելեկտրածին շարժակներու տերերէն կը պահանջուի յունիս 2020-ին համար յարկաբաժիններուն եւ վաճառատուներուն պարագային որդեգրել հետեւեալ սակացոյցը.-

- ՄԵՒ ամփերի, գինը 20.000 լ.ո. (քսան հազար լիք. ոսկի):
- Երեք ամփերի գինը 60.000 լ.ո. (վաթսուն հազար լիք. ոսկի):
- Հինգ ամփերի գինը 100.000 լ.ո. (հարիւր հազար լիք. ոսկի):

